

## ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՎԵՐԱՀՄԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՅԻՄԱԿԱՆ ԱՎԻՍՅԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսումնասիրությանը ընդգրկված ժամանակահատվածը՝ 2007-2008 թվականները:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է հետևյալը՝

Լիցենզիաների տրամադրման գործընթացի ուսումնասիրություն. Ուսումնասիրության պահին թվով 12 կազմակերպություններին հատկացված օդանավ շահագործողի սերտիֆիկատները գտնվում էին ուժի մեջ: Աշխատանքային խումբը ուսումնասիրել է նշված 12 կազմակերպություններին տարբեր տարիներին տրամադրված ավելի քան 17 օդանավ շահագործողի վկայականների (այսուհետ՝ ՕՇՎ) տրամադրման հիմք հանդիսացող փաստաթղթերը:

ՀՀ ԿԱ ՔԱԳՎ կողմից իրականացվող ՕՇՎ-երի տրամադրման գործընթացի ուսումնասիրությամբ հայտնաբերված նույնատեսակ և առավել էական խախտումների և թերությունների շարքում առաջին հերթին անհրաժեշտ է նշել այն, որ գրեթե բոլոր ընկերությունների սերտիֆիկացումը իրականացվել է առանց սերտիֆիկացվող կազմակերպությունում տեսչական ուսումնասիրություն կամ ստուգում իրականացնելու (սերտիֆիկացման 3-րդ փուլ): ՕՇՎ տրամադրման գործընթացի բովանդակային վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ հենց այս փուլն է ամենակարևորը և ամենաորոշիչը ամբողջ գործընթացի համար, առանց որի անհնար է պատկերացում կազմել համապատասխանում է կազմակերպությունը վկայականի չափանիշներին թե ոչ:

Սերտիֆիկացված ընկերությունների գործունեության նկատմամբ վերահսկողություն.

Աշխատանքային խումբը ուսումնասիրել է 2007թ. և 2008թ.-ին գործող օդանավ շահագործողի վկայական ունեցող թվով 17 ընկերությունների տեսչական ստուգումների իրականացման կարգը և արդյունքները: Համաձայն գործող կարգի՝ տեսչական ստուգումները իրականացվում են ավիաընկերությունների՝ 'Աշուն-ձմեռ' և 'Գարուն-ամառ' ժամանակաշրջանին պատրաստվածությունը պարզելու եղանակով, որի համար ՀՀ ԿԱ ՔԱԳՎ պետք արձակում է հրաման: Բոլոր ընկերությունները՝ ըստ Վարչության կողմից ներկայացված տվյալների, համաձայն վերը նշված ժամանակացույցի պատշաճ ստուգվել են: Մակայն հարկ է փաստել, որ ընկերությունների ճնշող մեծամասնությունը (17-ից 14-ը) բազավորված են եղել և գործունեություն են իրականացրել(ում) արտասահմանյան երկրներում (ՌԴ, ԻԻՀ, ՄԱԷ և այլն):

Աշխատանքային խումբը ուսումնասիրել է նաև ավիաընկերությունների տնտեսական գործունեությունը բնութագրող որոշ ցուցանիշներ: ՀՀ ԿԱ ՊԵԿ կատարված հարցման արդյունքները, որոնք արտացոլում են 2006-2008թթ.-ի ընթացքում վճարված բոլոր տեսակի հարկերի (ԱԱՀ, շահութահարկ, սոց. վճար և այլն) մասին, հիմք են տալիս ենթադրել, որ մի շարք ընկերություններ գործունեություն են իրականացնում ստվերում:

Օդային ուղու շահագործման թույլտվությունների տրամադրման գործընթացի ուսումնասիրություն.

'Ավիացիայի մասին' ՀՀ օրենքի 48-րդ և 49-րդ հոդվածների 1-ին կետերով սահմանվում է, որ ընկերություններին՝ կանոնավոր և ոչ կանոնավոր չվերթներ իրականացնելու համար, օդային

ուղիների շահագործման թույլտվությունները (օդանավ շահագործողի վկայական ունենալու դեպքում) տրամադրում է լիազորված մարմինը (ՀՀ ԿԱ ՔԱԳՎ): Նույն օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է նաև, որ թույլտվությունների կանոնակարգը, դրա պահանջներն ու պայմանները նույնպես պետք է սահմանի լիազորված մարմինը: Ուսումնասիրության ընթացքում պարզվել է նաև, որ ՀՀ ԿԱ ՔԱԳՎ-ի կողմից օդուղիների տրամադրման որևէ կանոնակարգ ստուգման պահի դրությամբ չի ընդունվել և ամբողջ գործընթացը որևէ նորմատիվ իրավական ակտով չի կարգավորվել: Ուսումնասիրությունից հետո Վարչության պետի հրամանով համապատասխան կանոնակարգերը հաստատվել են:

Վարչությունում առկա են բազմաթիվ խնդիրներ նաև փաստաթղթերի պահպանության և արխիվացման ոլորտում: